Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
նոյեմբերի 5 -ի N 682 - Ա
որոշման

«ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ,
ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱՁԻՆՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը իր 17 ամյա գործունեության ընթացքում կարևորել է բնակչության առողջության պահպանումը: Անհրաժեշտ գիտելիքներն ու միջոցները հասանելի դարձնելը գյուղական համայնքների բնակիչներին և բուժ անձնակազմին եղել է առաջնահերթություն: Հաշվի առնելով կատարված աշխատանքը առողջապահության ոլորտում, ինչպես նաև COVID-19 համավարակի պայմաններում Հայաստանի գյուղական համայնքների բժշկական հաստատությունների ներկայիս վիճակը, հիմնադրամը որոշում է կայացրել Դսեղ համայնքում կառուցել նոր առողջության կենտրոն: Ներկայումս Դսեղն ունի առողջության կենտրոն, այն կառուցվել է «Հայկական կարմիր խաչի ընկերության» աջակցությամբ 1990 թվականին: Շենքային վատ պայմանները անհնար են դարձնում որակյալ բժշկական ծառայությունների մատուցումը համայնքների բնակիչներին: Ծրագրի նպատակն է Դեսդ, Չկալով, Դեբետ, Մարց, Ձորագետ, Քարինջ, Վահագնի, Ձորագյուղ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Անտառամուտ, Թումանյան, Լոռուտ, Շամուտ, Ահնիձոր և Աթան համայնքների բնակիչներին մատուցել բարձրորակ բժշկական ծառայություններ, ավելացնել հասանելի բժշկական ծառայությունների քանակը:

		ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առողջության կենտրոնը նախատեսվում է կառուցել Դսեղ համայնքի տարածքում, ոչ հեռու ներկայումս գործող առողջության կենտրոնի տարածքից: Առողջության կենտրոնի կառուցապատման մակերեսը կազմում է 350 ք/մ, իսկ ընդհանուր տարածքը՝ ավտոկայանատեղի և այգի մոտ 2000 ք/մ: Կենտրոնի ժամանակակից շենքային պայմանները, բժշկական նորագույն անհրաժեշտ սարքավորումներն և համապատասխան կահավորումը կստեղծեն տարածաշրջանում նմանը չունեցող ամբուլատոր ծառայություններ մատուցող հաստատություն իր յուրօրինակ միջավայրով: Նախատեսվում է բարեկարգել նաև շենքի շրջակայքը: Նախատեսվում է կառուցել ավտոկայանատեղի, ինչպես նաև լուսավորվելու է առողջության կենտրոնի շրջակայքը: Այս պահին Դսեղի ամբուլատորիայի ծառայություններից օգտվում են շուրջ 5,000 բնակիչ շրջակա 7 գյուղերից: Մենք նախատեսում ենք սպասարկման շրջանակը ավելացնել և ներգրավել ևս 6 գյուղ: Այդ դեպքում ընդհանուր սպասրկվող բնակիչների թիվը կանցնի 10,000-ը: Նոր կառուցվող շենքը պետք է փոխարինի այս պահին առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող կենտրոնին, որի շենքային և գույքային պայմանները անհնարին են դարձնում նշված ծառայությունների պատշաճ մատուցումը: Նախատեսվում է ներկայումս գործող «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի ամբողջ աշխատակազմին տեղափոխել նոր կառուցվող առողջության կենտրոն ամբողջովին անվճար հիմունքներով, իսկ բնակչությանը մատուցվող բոլոր պետական ծառայությունները կշարունակվեն մատուցվել համաձայն ՀՀ օրենսդրության: Այն ծառայությունները, որոնք մատուցվում են անվճար (պետ. պատվերով)՝ կշարունակվեն նույն կերպ: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առողջության կենտրոնը հագեցված է լինելու նորագույն բժշկական սարքավորումներով ինչը թույլ կտա ներգրավել հյուր-բժիշկ մասնագետների: Հյուր-բժիշկների կողմից մատուցվող ծառայությունները կլինեն վճարովի սակայն չեն գերազանցի կազմակերպված այցի(երի) ինքնարժեքը: Այսպիսի այցերը հնարավոր է կազմակերպվեն շաբաթական և ամսական հաճախականությամբ: Նշված այցերի նպատակն է՝ հասանելի դարձնել տարածաշրջանում բացակա/չներկայացված բժշկական ծառայությունները: Հիմնականում ներգրավելու ենք նեղ մասնագիտական ծառայություններ մատուցող բժիշկների:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:

3.	Բարեգործը	«Չիլդրեն օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5-րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ ք. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզ, Դսեղ համայնք, համայնքային զարգացում, առողջապահություն:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 308,500,000 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Դեսդ, Չկալով, Դեբետ, Մարց, Ձորագետ, Քարինջ, Վահագնի, Ձորագյուղ, Եղեգնուտ, Վահագնաձոր, Անտառամուտ, Թումանյան, Լոռուտ, Շամուտ, Ահնիձոր և Աթան համայնքների բնակիչները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարություն՝ • Նախագծման աշխատանքներ՝ 7,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2020 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2021 թվականի հունվարի 15-ը: • Հեղինակային հսկողության աշխատանքներ՝ 2,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ապրիլի 01-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը: • Տեխնիկական հսկողության աշխատանքներ՝ 20,000,000 ՀՀ դրամ արժողությամբ նախատեսվում է ձեռք բերել 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը: • Կմախքի շինարարության (հիմքեր, արտաքին պատեր, տանիք, լուսամուտ, դուռ) աշխատանքներ՝ 94,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 30-ը, • Օդափոխության համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 15,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի փետրվարի 1-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը,

		• Ջրամատակարարման և կոյուղու ցանցերի կառուցում-մոնտաժային աշխատանքներ՝ 15,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 1-ը, • Էլեկտրաէներգիայի մատակարարման բարձր լարման ցանցի կառուցում և մոնտաժային աշխատանքներ՝ 5,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, • Էլեկտրաէներգիայի մատակարարման ցածր լարման ցանցի մոնտաժային աշխատանքներ՝ 3,500,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի փետրվարի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը, • Ներքին հարդարման աշխատանքներ՝ 45,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 30-ը: Գենպլանային բարեկարգում՝ • Ավտոկայանատեղիի կառուցման և բակային տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ 25,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի մարտի 1-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը: Սարքավորումների և կահույքի ձեռքբերում՝ • Բժշկական սարքավորումների ձեռքբերում (ավտոկլավ, ուլտրամանուշակագույն լույս, ռենտգեն սարք, կլինիկական լաբորատորիա, լաբորատոր պարագաներ և նյութեր, գինեկոլոգիական աթոռ, պատգարակներ և այլ բժշկական սարքավորումներ և պարագաներ՝ 20,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է ձեռք բերել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը: • Կահույք և կահավորման պարագաներ (աթոռ, սեղան, պահարան, գորգ, նկար, վարագույր, լամպ)՝ 15,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է ձեռք բերել 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը: • Համակարգչային սարքավորումներ (համակարգիչ, մոնիտոր, անվտանգության համակարգ, տպիչ, հեռախոս) 4,000,000 ՀՀ դրամ արժողությամբ, նախատեսվում է ձեռք բերել 2021 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը: • Գովազդային ծառայություններ և պարագաներ՝ 10,000,000 ՀՀ դրամ արժողությամբ նախատեսվում է ձեռք բերել 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:

		• Բեռնափոխադրման ծախսեր՝ 3,000,000 ՀՀ դրամ արժողությամբ նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը: • Բժշկական անձնակազմը սպասարկող շտապ օգնության մեքենա՝ 20,000,000 ՀՀ դրամ արժողությամբ նախատեսվում է ձեռք բերել 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը: • Բացման միջոցառման ծախսեր՝ 5,000,000 ՀՀ դրամ արժողությամբ նախատեսվում է ձեռք բերել 2022 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և/կամ կնքել՝ • Կապալի պայմանագրեր ○ Շինություն՝ հիմքեր, պատեր, առաստաղի ծածկ, տանիք, պատուհաններ, դռներ - 74,000,000 ՀՀ դրամ: ○ Օդափոխության համակարգի նախագծում և տեղադրում - 10,000,000 ՀՀ դրամ: ○ Ջրամատակարարման և կոյուղաջրերի կառավարման ցանցի նախագծում և շինարարություն - 10,000,000 ՀՀ դրամ: ○ Էլեկտրաէներգիայի մատակարարման բարձր լարման ցանցի կառուցման և մոնտաժային աշխատանքներ - 5,000,000 ՀՀ դրամ: ○ Էլեկտրաէներգիայի մատակարարման ցածր լարման ցանցի մոնտաժային աշխատանքներ - 3,500,000 ՀՀ դրամ: ○ Ներքին հարդարման աշխատանքներ - 30,000,000 ՀՀ դրամ: ○ Ավտոկայանատեղիի կառուցման և բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ - 20,000,000 ՀՀ դրամ: • Ծառայությունների մատուցման պայմանագրեր ○ Գովազդային ծառայությունների և պարագաների - 10,000,000 ՀՀ դրամ: ○ Բեռնափոխադրման ծառայությունների մատուցման - 2,000,000 ՀՀ դրամ: ○ Տեղխնիկական հսկողության - 20,000,000 ՀՀ դրամ: ○ Հեղինակային հսկողության - 2,000,000 ՀՀ դրամ: ○ Նախագծման աշխատանքների - 7,000,000 ՀՀ դրամ: ○ Կենտրոնի բացման միջոցառումների ծառայություններ - 5,000,000 ՀՀ դրամ: • Մատակարարման պայմանագրեր

		○ Շին. նյութերի ձեռքբերման՝ մալուխ, ցեմենտ, տուֆ, ապակի, ավազ, գիպս, երկաթբետոն, լցանյութեր, հիդրոմեկուսիչ նյութեր, հիմնաներկ, ձայնամեկուսիչ նյութեր, ճոպան, պաստառ, ջերմամեկուսիչ նյութեր, տախտակ, մեխ, տրավերտին, ամրան, ներկ, ասֆալտ, լեդ լուսավորիչ, անցակետի արգելաձող և այլ անհրաժեշտ շին. նյութեր - 45,000,000 ՀՀ դրամ: ○ Բժշկական սարքավորումների մատակարարման - 10,000,000 ՀՀ դրամ: ○ Կահույքի և կահավորման պարագաների մատակարարման - 15,000,000 ՀՀ դրամ: ○ Համակարգչային սարքավորումների մատակարարման - 4,000,000 ՀՀ դրամ: ○ Բժշկական անձնակազմը սպասարկող շտապ օգնության մեքենայի ձեռքբերման - 20,000,000 ՀՀ դրամ: ○ Վառելիքի ձեռքբերման - 1,000,000 ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեգործական բեռների ներմուծում՝ • Կեղտաջրերի մաքրման կայան - 5,000,000 ՀՀ դրամ: • Բժշկական սարքավորումներ - 10,000,000 ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր՝ • Գովազդային ծառայություններ և պարագաներ - 10,000,000 ՀՀ դրամ: • Բեռնափոխադրման ծառայություններ - 2,000,000 ՀՀ դրամ: • Կենտրոնի բացման միջոցառումների ծառայություններ - 5,000,000 ՀՀ դրամ: • Վառելիքի ձեռքբերում - 1,000,000 ՀՀ դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել ՀՀ առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի, Դսեղի համայնքապետարանի հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկություններ ներկայացնելով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ